

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ԴՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2022



Սիրելի՛ր սյունեցիներ

Շնորհավորում եմ բոլորիս մայիսի 28-ին նշվող Հանրապետության տոնի կապակցությամբ:

Մայիսյան հերոսամարտերի արդյունքում ստեղծված Հայաստանի Առաջին Հանրապետությունը մեզ համար դարձավ պետականություն ունենալու վաղեմի ու բաղձալի երազանքի իրագործումը:

1918-ի մայիսյան պատմական ու շրջադարձային իրողությունը հայ ժողովրդի համար հետագայում դարձավ նաև անկախության, Երրորդ հանրապետության ու ինքնիշխանության համար պայքարի հիմնաքարը:

Պարտավոր ենք ապրել այնպես, որ իրավունք ունենանք կոչվելու Մայիսի 28-ը մեզ պարզևած հերոսների ժառանգը: Իսկ այդ հերոսների շարքում հավերժ մեծարանքի արժանի ու անօրինակ սխրանքներ գործած սյունեցիներ կան... Շնորհակալ ենք նրանց նաև մեր այսօրվա հայրենիքի համար:

Հիշելով, թե պատմական ինչ իրավիճակում է կերտվել Մայիսի 28-ը, պետք է ընդունենք, որ այս տոնը մեր ուժերի հանդեպ ինքնավստահության, ազգային համախմբման դեպքում ուժի ու անպարտելիության ապացույցն է, որից դասեր ունենք քաղելու:

Մաղթում եմ բոլորիս միասնություն, խաղաղություն, բարություն և սեր՝ միմյանց ու Հայրենիքի հանդեպ: